ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/88

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Վանի» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի և գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4837-2021 գրությամբ «Վանի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.03.2021թ. թիվ 02/16.4/2568-2021 գրության հիման վրա, 01.04.2021թ.-ին «Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 01.04.2021թ.-ին:

01.04.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/88 համարի ծածկագիրը:

14.04.2021թ.-ին, 27.04.2021թ.-ին և 30.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2021թ.-ին:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 19.03.2021թ. թիվ 02/16.4/2568-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի հունվարի 22-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի և գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<Վանի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի կատարվել (փոխարենը ներկայացվել են այլ ծածկագրով գնման ընթացակարգի փաստաթղթեր):

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վանի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն (Հանձնաժողովի անդամները) 16.04.2021թ.-ին Բողոքներ քննող անձին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/88 ընթացակարգի վերաբերյալ Ձեր կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ներկայացված գրության կապակցությամբ տեղեկացնում ենք.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իրականացված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում «Վանի» ՍՊԸ-ի կողմից լրացված և ներկայացված հրավերի Հավելված 1.1-ում գնահատող հանձաժողովը արձանագրել է անհամապատասխանություն, առ այն որ մասնակցի կողմից 6, 7, 9 և 10 տողերով ներակայացված մոդելների համար նշված տեխնիկական բութագրերը չեն համապատասխանում իր իսկ կողմից ներկայացված մոդելներին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ որպես շտկում մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում սխալ է նշված եղել ոչ միայն գնման ընթացակարգի ծածկագիրը, այլ նաև գնման առարկաների անվանումները:»:

3. <u>«Վանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.04.2021թ.-ին գրությամբ դիմել է «Վանի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4837-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Վանի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների

համար հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի՝ «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես Հավելված 1.1-ի մասով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար 6, 7, 9, 10-րդ տողերի տեխ. Բնութագրերի տվյալները չեն համապատասխանում ներկայացված մոդելներին:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Վանի» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Արդեն՝ համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ այլ փոխարենը ներկայացվել են սույն գնման ընթացակարգի հետ կապ չունեցող փաստաթղթեր:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Վանի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ այլ փոխարենը ներկայացվել են սույն գնման ընթացակարգի հետ կապ չունեցող փաստաթղթեր:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց «Վանի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/88 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. Նախ, բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 46-րդ կետի ահանջները, որը սահմանում է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են

հայտնաբերված անհամապատասխանությունները: Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետը, պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը ընդհանրապես չի նկարագրել արձանարված անհամապատասխանությունը, այլ ընդամենը վերացական նշել է, որ Հավելված 1.1-ի մասով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար 6, 7, 9, 10-րդ տողերի տեխ. բնութագրերի տվյալները չեն համապատասխանում ներկայացված մոդելներին: Նման ձևակերպումից այդպես էլ անհայտ է մնում, թե կոնկրետ ինչը ինչին չի համապատասխանում և ինչ հիմնավորմամբ, ինչ ուղղությամբ պետք է կատարվի շտկումը:

2. Գտնում ենք, որ 18.03.2021թ. «Կանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև դրա արդյունքում ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելը, մեղմ ասած, իրավաչափ չէ, հետևյալ հիմնավորմամբ

Հավելված 1.1-ի մասով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար 6, 7, 9, 10-րդ տողերի տեխ, բնութագրերի տվյալները չեն համապատասխանում ներկայացված մոդելներին:

Այս մասով գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն: ՍՊԸ-ի կարծիքով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանրաբեռնել է «Վանի» ՍՊԸ-ին այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, մինչդեռ ներկայացված տեխնիկական բնութագրերը իրենց ամբողջության մեջ համապատասխանել են Հրավերի պահանջներին և համապատասխանել են պատվիրատուի կարիքին:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույնիսկ այս ոչ իրավաչափ շտկման պարագայում «Վանի» ՍՊԸ-ի կողմից կատարվել է շտկումը՝ իրեն համար ընկալելի սահմաններում և այն սահմանված ժամկետում ներկայացվել գնահատող հանձնաժողովին /ապացույցը կցվում է/, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես ընթացակարգին չվերաբերվող փաստաթղթեր, մինչդեռ ներկայացված փաստաթղթերից պարզ է դառնում, որ փաստաթղթերը վերաբերվում են «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգին, այդ ընթացակարգով պահանջված ապրանքերի տեխնիկական բնութագրին, սակայն տեխնիկական վրիպակի արդյունքում հավելվածի վերևում նշվել է սխալ ծածկագիր:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Վանի» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ

ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Վանի» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

15.04.2021թ.-ին ներկայացված լրացմամբ, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Վանի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Թիվ ՍՅ-ԼՕ-2021/88 ծածկագրով ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 14.04.2021թ. նշանակված նիստի ընթացքում մենք պարտավորվեցինք ներկայացնել «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկած Հավելված 1.1-ը, որտեղ ակնհայտ է դառնում, որ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն հանգամանքը, որ իբր անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել՝ այլ փոխարենը ներկայացվել են սույն գնման ընթացակարգի հետ կապ չունեցող փաստաթղթեր, մեղմ ասած չի համապատասխանում իրականությանը այն պարզ պատճառով, որ շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ում առկա է եղել ընդամենը տեխնիկական վրիպակ, այն է՝ Հավելված 1.1-ում «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի փոխարեն նշվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/2» ՀՀ Վայոց Ձորի մարզի ... ծածկագրով ընթացակարգ /կցվում է/, իսկ ամբողջ չափաբաժինները, ապրանքային անվանումները և այլն նշվել են համաձայն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մենք մնում ենք այն նույն կարծիքին, որ գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն, ավելին՝ գնահատող հանձնաժողովը ծանրաբեռնել է <<Վանի>> ՍՊԸ-ին այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, մինչդեռ ներկայացված տեխնիկական բնութագրերը իրենց ամբողջության մեջ համապատասխանել են Հրավերի պահանջներին և համապատասխանել են պատվիրատուի կարիքին:

Շտկման արդյունքում ուղարկած նամակը /переслать/ փարբերակով՝ սույն լրացման հետ միասին կուղարկվի gbqa_ohanyan@mail.ru էլ. փոստի հասցեին:»:

4. <u>ՍՑ-LO-2021/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի և գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.01.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել նաև «Վանի» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.03.2021թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ տողերի տեխնիկական բնութագրերի տվյալները չեն համապատասխանում ներկայացված մոդելներին:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 18.03.2021թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրությունը:

vi. Հանձնաժողովի 22.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 18.03.2021թ.-ին ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա

ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջիններիս կողմից, բացառությամբ «Վանի» ՍՊԸ-ի, որի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել (փոխարենը ներկայացվել են սույն գնման ընթացակարգի հետ կապ չունեցող փաստաթղթեր):

vii. Նույն արձնագրության 1.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է «Վանի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4837-2021 գրությամբ «Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի և գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով

կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության

միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ

իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու

համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի և գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային մոդուլային շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.01.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջների նկատմամբ Հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Վանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 6 րդ, 7 րդ, 9 րդ և 10-րդ տողերի տեխնիկական բնութագրերի տվյալները չեն համապատասխանում ներկայացված մոդելներին, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 18.03.2021թ.-ին Մասնակցի էլ. հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրությունը:

22.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-3 արձանագրությամբ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վանի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն

ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը և ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է նշված մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, Մասնակցին ուղարկված շտկման մասին ծանուցմամբ, Հանձնաժողովի քարտուղարը կցել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության արտատպված տարբերակը, որում, Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արձանագրված անհամապատասխանություններն անհասկանալի են, հստակ չեն ու չեն ելնում Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջներից, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ շտկման մասին ուղարկված ծանուցմամբ (արձանագրությամբ) հայտնաբերված անհամապատասխանությունների անհստակությունն օբյեկտիվորեն զրկել է Մասնակցին անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից:

Սույն դեպքում, Հանձնաժողովը, Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, արձանագրելով անհամապատասխանություն, Մասնակցի վրա դրել է ոչ իրավաչափ պարտականություն, այն է՝ առաջարկել է շտկել այնպիսի անհամապատասխանություն, որն առկա չէր:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ կետի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Ուստի, այն դեպքերում, երբ առաջանում են մասնակցի կողմից ներկայացված տվյալների նկատմամբ կասկածներ, հանձնաժողովի կողմից չի կարող կիրառվել Կարգի 41-րդ կամ Հրավերի 8.9-րդ կետերի դրույթներով սահմանված՝ մասնակցին շտկան առաջարկ ներկայացնելու կարգավորումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Վանի» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.04.2021թ.-ի թիվ 26/26-1/4837-2021 գրությամբ «Վանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/88 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**